

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
(Ծննդյան 110-ամյակի առթիվ)



Լրացավ բազմափաստակ հնագետ, ականավոր պատմաբան, Լճաշենի հնագիտական արշավախմբի ղեկավար, Հայաստանի պատմության պետական թանգարանի (ՀՊՊԹ) հնագիտության բաժնի վարիչ (1949-1974 թթ.), հայագիտության անխոնջ մշակ՝ Հարություն Հովակիմի Մնացականյանի 110-ամյակը:

Հ. Մնացականյանը ծնվել է 1906 թ., Կարսի մարզի Բազարան գյուղում, երկրագործի ընտանիքում (մտերիների շրջանում նա ասել է, որ հայրը հոգևորական է եղել): Իսկական անուն-ազգանունը Մարութ Մնեյան է: 1918 թ., երբ թուրքական զորքը ավերի ու սպանդի է ենթարկել Բազարանն ու նրա բնակիչներին, սպանվել են նաև Մնեյանների ընտանիքի անդամները: Փրկվել է միայն 12-ամյա Մարութը, որն ականատես է եղել իր ծնողների և երկու ավագ եղբայրների սպանությանը:

Անցնելով գաղթի, սովի ու բազմաթիվ զրկանքների միջով՝ Մարութը հայտնվում է Երևանի, ապա Էջմիածնի որբանոցներում (1918-1923 թթ.), որտեղ էլ ստանում է միջնակարգ կրթություն (ծննդավայրում հաճախել է եկեղեցուն կից ծխական դպրոց): Մանկատանն անվանափոխվում է՝ դառնալով Հարություն Մնացականյան:

1923-1928 թթ. ապրում էր Էջմիածնի մերձակա Սամաղար գյուղում (այժմ՝ Գեղակերտ)՝ կատարելով կրթական և կուսակցական աշխատանքներ, միաժամանակ բանվորություն էր անում Երևանի փայտամշակման ֆաբրիկայում: 1930 թ. ընդունվում է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետ, 1933 թ. ավարտում այն՝ որպես պատմաբան-մանկավարժ:

Դեռ ուսանողական տարիներից Հ. Մնացականյանին հրապուրում է հնագիտության առեղծվածային ու հետաքրքիր աշխարհը: 1930 թ. նա արդեն մասնակցում է Լոռու տարածաշրջանի Ձորագետ և Ղաչաղան (այժմ՝ Արևածագ) գյուղերի հնագիտական պեղումներին: 1938-1941 թթ. ուսումը շարունակում է Երևանի Արմֆանի ասպիրանտուրայում (համատեղությամբ աշխատում է ՀՊՊԹ-ում): Աշակերտում է պատմական գիտություն-

ների դոկտոր, բաժնի վարիչ, հնագետ Մսրատ Տեր-Ավետիսյանին (1875-1943 թթ.), որն ուսուցանում է ոչ միայն հնագիտության հիմունքները, այլև օգնում հաստատուն քայլերով գիտության ասպարեզ մտնել: Հանձինս Հ. Մնացականյանի, տեսնում է իր արժանի հետնորդին՝ նկատելով, որ երիտասարդը խելացի է, աշխատասեր և պրպտող:

1937-1939 թթ. Ս. Տեր-Ավետիսյանի ղեկավարությամբ սկսվում են Դվինի պեղումները, որտեղ մասնագիտական մկրտություն են ստանում սկսնակ հնագետներ Հ. Մնացականյանը, Բ. Առաքելյանը և ճարտարապետ Վ. Հարությունյանը: Արշավախմբի կազմում էր արդեն փորձառու հնագետ Կ. Ղաֆադարյանը: Հ. Մնացականյանը մասնակցում է որպես ասպիրանտ, ապա՝ որպես մասնագետ:

Երկրորդ աշխարհամարտի օրերին մեկնում է ռազմաճակատ, և ծառայության անցնելով որպես ավագ հրահանգիչ ու զինվորական լրագրող, վերադառնում է կապիտանի ուսադիրներով:

Պատերազմից հետո նվիրվում է գիտական աշխատանքի. 1946 թ. դարձյալ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտ էր (ավարտում է 1947 թ.), միաժամանակ աշխատում է Պատմության թանգարանի հնագիտության բաժնում, նաև շարունակում է մասնակցել Դվինի և Կարմիր բլուրի պեղումներին: 1948 թ. պեղումներ է կատարում արդեն Սևանի ավազանում: 1949 թ. պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը՝ «Արևի պաշտամունքը Հին Հայաստանում, ըստ բրոնզե պեղածո իրերի» թեմայով:

Նկատի ունենալով գիտական աչքի ընկնող ներդրումները՝ 1949 թ. Հայկական ԽՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ նշանակվում է ՀՊՊԹ-ի հնագիտության բաժնի վարիչ: Հ. Մնացականյանը կարծես մի երկրային առաքելություն ուներ. պետք է նոր էջ գրեր հայ հնագիտության պատմության մեջ՝ ուսումնասիրելով Հայաստանի նշանավոր բրոնզեդարյան հնավայրերից մեկը՝ Լճաշենը: «Պրպտել ու գտնել լճի հազարամյա գաղտնիքը, սառը ջրերի տակ թաքնված մարդկային մտքի գոհարները: ...Պետք է բարձրացնել այն սև վարագույրը, որի հետևում թաքնված է Սևանա լճի հազարամյակների գաղտնիքը», - ասել է հնագետը (Խոսում են հուշարձանները, Ե., 1968, էջ 111 և 208):

1952-1975 թթ. լինելով Սևանի ավազանի հնագիտական արշավախմբի ղեկավար՝ նա անգնահատելի ավանդ թողեց հայ հնագիտության պատմության մեջ: Նրա պեղած հնագիտական նյութերը քանակով և հարստությամբ մնացին անգերազանցելի:

Լճաշենի պեղումներից (1956-1974 թթ.) հայտնաբերված շատ նյութեր եզակի են, ընդհանրապես զուգահեռներ չունեն: Հ. Մնացականյանի ամենամեծ հայտնագործությունը թերևս լճաշենյան փայտե սայլերն ու մարտակառքերն են, ինչպես նաև բրոնզե արձանիկները, դրանց մանրակերտերը, զենքերը, խեցեգործական արվեստի անկրկնելի

նմուշները, հատկապես՝ եռագույն խեցեղենը: Կատարողական և պատրաստման հմտությամբ, որպես արվեստի անգուգական ստեղծագործություններ, աչքի են ընկնում Լճաշենում հայտնաբերված ոսկյա զարդերը:

Աշխատանքային խիստ արդյունավետ տարիների ընթացքում Հ. Մնացականյանը Հայաստանի տարածքում պեղել և ուսումնասիրել է շուրջ երեք տասնյակ հնագիտական հուշարձաններ, որոնց մեջ անառարկելիորեն առանձնանում է Լճաշենը:

Ընդհանուր առմամբ, 1952-1975 թթ. ընթացքում նա պեղումներ է կատարել Լճաշենում, Ջրառատում, Աթարբեկյանում, Ցամաքաբերդում, Ակունքում, Վարդենիսում, Շորժայում, Ադիամանում, Հայրավանքում, Մուխանում, Սևանում, Աստղաձորում, Կարմիրում, Կարճաղբյուրում, Արդանիշում, Փամբակում, Գոլովինոյում, Տոլորսում, Գառնիում, Արթի-կում, Շիրակավանում: Նշենք, որ միայն ՀՊՊԹ-ի հնագիտական ֆոնդը Հ. Մնացականյանի անխոնջ աշխատանքի շնորհիվ համալրվել է շուրջ 10000 հնագիտական արժեքներով:

Բազմաթիվ են նրա գիտական աշխատությունները՝ հետաքրքիր և կշռադատված, լուրջ ու ծանրակշիռ եզրահանգումներով: Գրել և տպագրել է գիտական հոդվածներ (հայերեն և ռուսերեն), գրքեր:

Լճաշենի նյութերի ուսումնասիրությունների հիման վրա գրած աշխատություններում Հ. Մնացականյանն անդրադարձել է Սևանի ավազանի հնագույն բնակիչների ծեսերին և թաղման սովորույթներին, արվեստին (փայտարվեստ, խեցեգործություն, մետաղագործություն, քանդակագործություն և այլն), հոգևոր պատկերացումներին և պաշտամունքին, դամբարանների տեսակներին, նաև տնտեսության ու անասնապահության կարևորագույն հարցերին: Այս հետազոտությունների շնորհիվ նա եզրակացրել է, որ Լճաշենյան մշակույթն ունի տեղական ծագում:

«Արևապաշտության հետքեր հին Հայաստանում, ըստ բրոնզե պեղածո իրերի» աշխատությունը (ՀՊՊԹ «Աշխատություններ», Ե., 1948, № 1, էջ 67-95), որը գրվել է թեկնածուականատենախոսության հիման վրա, աչքի է ընկնում հիմնավոր վերլուծությամբ և փաստական նյութի հարստությամբ:

Հ. Մնացականյանի ուսումնասիրությունները որքան հետաքրքիր, նույնքան հիմնավորված են փաստերով: Այս առումով կարևորվում են հատկապես 1950-ական թվականներին տպագրված՝ Սևանի ավազանի ցամաքած տարածքում, Գոլովինոյում (Դիլիջան), Ցամաքաբերդի դամբարանադաշտում (Սևան), Տոլորսում (Սիսիան), Աթարբեկյանում (Հրազդան), Բասարգեչարում (Վարդենիս), Նոր-Արեշում (Երևան) կատարված հնագիտական պեղումների արդյունքներին վերաբերող հոդվածները:

Բազմազան են Հ. Մնացականյանի գիտական հետաքրքրությունները: Իր աշխատություններում ուսումնասիրվող նյութերը նա դիտարկել է ոչ միայն հնագիտական, այլև արվեստաբանական տեսանկյունից, վերլուծել բազմակողմանի հիմնավորումներով, ներկայացրել է ընդհանրությունները, առանձնահատկություններն ու եզակիությունը: Հետազոտվող առարկայի միջոցով ներկայացրել է բրոնզի դարաշրջանի վարպետի մտածողությունն ու աշխարհայացքը, հոգևոր ընկալումներն ու պատկերացումները, որոնք հիմք են ծառայել ստեղծելու ժամանակի համար բարձր, կատարողական մշակույթ և արվեստի հոյակապ նմուշներ:

1960 թ. լույս է տեսնում մի հետաքրքիր հոդված (*Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан. - Советская археология, 1960, N 2, с. 139-152*)՝ նվիրված Լճաշենի N 9 և N 11 դամբարաններում Հ. Մնացականյանի հայտնաբերած եզակի գտածոներին՝ մ.թ.ա. XIII-XII դդ. թվագրվող սայլերին և մարտակառքերին, դրանց կառուցվածքային առանձնահատկություններին և զարդարման ձևերին: Ոչ մի տեղ, մեկ դամբարանում այդքան տարբեր կառուցվածքով և թվաքանակով սայլեր ու մարտակառքեր չեն հայտնաբերվել, ինչն ըստ Հ. Մնացականյանի, վկայում է նստակյաց ցեղերի բարձր մշակույթի, փայտամշակման արվեստին և արհեստին հմտությամբ տիրապետելու, տնտեսության զարգացած լինելու մասին:

Գիտնականը Սևանի ավազանը, մասնավորապես Լճաշենը, համարել է հնագույն հուշարձանների նշանավոր օջախ: Տեղաբնիկները հանքերից հանել և մշակել են մետաղը, հատկապես պղինձ և ոսկի: Նրանք բարձր կատարողական արվեստի են հասել նաև խեցեգործության մեջ, ինչի մասին է վկայում հնագետի պեղած ծակոտկեն եռանկյունանախշերով և օձազայարներով, Լճաշենի մենաշնորհ համարվող եռագույն (կարմիր, սև և սպիտակ) ներկով խեցեղենը՝ իր ոչ սովորական զարդամոտիվներով: Հնագետը դրանք դասել է ծիսական նշանակություն ունեցող խեցանոթների շարքին:

Արժեքավոր է «Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները» հոդվածը (*Պատմա-բանասիրական հանդես, 1965, - 2, էջ 95-115*), որում հնագետը դասակարգում և թվագրում է այն նյութերը, որոնք նրա դեկավարությամբ ՀՊՊԹ հնագիտական արշավախումբը պեղել է 1956-1963 թթ. ընթացքում:

Ուշագրավ աշխատանք է աստղագետ Բ. Թումանյանի համահեղինակությամբ հրատարակված «Բրոնզի դարի գոտի-օրացույցը» (Ե., 1965):

Հ. Մնացականյանի «Խոսում են հուշարձանները»՝ գիտահանրամատչելի, գեղարվեստական միջոցներով ստեղծված (կերպարներ, պատկերներ) արժեքավոր աշխատությունը (Ե., 1968) բացահայտում է նաև նրա մեկ այլ՝ գրողի շնորհը:

Հ. Մնացականյանի պեղած լճաշենյան ոսկերչական արվեստի անկրկնելի զարդերը, հատկապես ուշ բրոնզեդարյան ոսկյա գորտաքանդակ և առյուծաքանդակ կրծքա-զարդերը ցայսօր համարվում են ՀՊՊԹ-ի ցուցադրության անկրկնելի նմուշներ:

Աշխատություններում նա ներկայանում է իր գիտական նախասիրություններով, հետաքրքրությունների բազմակողմանի դրսևորումներով, անդրադառնում է նաև Սևանա լճի հորիզոնական տատանումների պատմությանը, խնդիրներին և պատճառներին, ներկայացնում տարբեր տարիների ուսումնասիրությունները և լճին առնչվող տեղեկատվությունը: Լճի հորիզոնական տատանումներին վերաբերող փաստերից շատերը գիտական մամուլում հրապարակվել են առաջին անգամ: Ի դեպ, Հ. Մնացականյանն է գրել 1963 թ. «Երևան» ֆիլմերի ստուդիայում թողարկված՝ «Թանգարան բաց երկնքի տակ» փաստավավերագրական ֆիլմի սցենարը: Սա Հայաստանի հնավայրերի և դրանք պեղող հնագետների մասին բացառիկ տեսագրություն է:

Հ. Մնացականյանի ղեկավարության տարիներին ՀՊՊԹ-ի Հնագիտության բաժինը ակնառու հաջողություններ է ունեցել ինչպես գիտական և մշակութային, այնպես էլ՝ նոր կադրերի պատրաստման գործում: Կյանքի վերջին տարիներին, մի կարճ ժամանակամիջոցում, նա դասավանդում էր նաև ԵՊՀ-ում:

Վաստակաշատ գիտնականին ճանաչողները, նրան բնորոշել են որպես համեստ, արտակարգ եռանդի տեր, իր գործին անմնացորդ նվիրված և բարեխիղճ մարդու: Ճարտարապետ, ակադեմիկոս Վարագդատ Հարությունյանը՝ նրան իրավամբ անվանել է «հայ Շլիման» (Կյանքիս քառուղիներում, Ե., 1999, էջ 176-177):

Լճաշենի հնավայրին համաշխարհային հռչակ բերած ականավոր գիտնականը համեստագույն մարդ էր, մտավորական՝ բառիս բուն իմաստով, որ երբեք փառք չի որոնել: Լինելով գիտությունների թեկնածու՝ ավելիին չի ձգտել, թեև բոլոր հնարավորություններն ունեցել է: Մահկանացուն կնքել է Երևանում, 1978 թ. նոյեմբերի 16-ին:

Հ. Մնացականյանը բացառիկ ազնվությամբ օժտված անհատականություն էր, մեծ գիտնական, որ ինքնատիպ հետք է թողել հայ հնագիտության պատմության մեջ:

ՔԵՇԻՇՅԱՆ Մ. Ս.